Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաատություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

897
291-71 Ա
Ա-79

Ա.

Անհատրուն

Բատանկաց մեղու

Օր. պետր- Մարիոսեան

Տպար Հայ Մխիթարեանց

18 79

№ 117
10073

1652003

891.71-93
Ա-79

ԱՒԵՆԱՐԻՈՒՍ

ԹՈՒԽՄԱՉ ՄԵՂՈՒ

Թր. Ն. Տէր—Մարկոսեանց։

Մեռնել կայ երկաթ ա,
Մեռնել կայ էրծաթ ա։
(Ժողովրդական առած.)

№ I.

ԹԻՖԼԻԶ

Յովհաննէս Մարտիրոսեանցի Տպարանում

1879

5818

Дозволено цензурою. Тифлисъ, 29 марта 1879 г.

Типографія И. Мартиросіанца, на Орбеліановской улицѣ, д. № 5.

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ․

Անօգուտ կլինէր այստեղ երկարօրէն բացատրել, թէ ինչ մեծ բարոյական ազդեցութիւն ունեն ընթերցանութեան գրքերը մանաւանդ մեզ հայերիս համար, նոյնպէս և աւելորդ կլինէր կրկնել, թէ չնայելով այդ ստիպողական պահանջողութեան՝ մենք չ՚ունենք համարեա ոչ մի ընթերցանութեան գիրք։ Մի կլասիկական առած ասում է, «Dic mihi, cumquo vivis, et dicam, tu es qualis» (ասա ինձ՝ ում հետ ես կենակցում և ես կ՚ասեմ՝ ինչ տեսակ մարդ ես դու)։ Ահա որքան մեծ է շրջապատողների ազդեցութիւնը մարդու վերայ, ոչ պակաս ազդեցութիւն ունեն գրքեր մարդու վերայ, ահա ինչու այս առածը մենք կարող ենք փոխադրել այսպէս. ‘‘ասա ինձ՝ ի՞նչ ես կարդում և ես կ՚ասեմ՝ ով ես դու‘‘։ Բայց հարցնում ենք՝ կարդալու ի՞նչ գիրք ունենք մենք հայերըս. ի՞նչ տանք մեր երեխաներին կարդալու։ — Համարեա ոչինչ բացի մի քանի գրքերից։

Ճշմարիտ է վերջին ժամանակներս ծագել է մի ձգտում այդ պակասութիւնները լրացնելու, որի հետևանքն եղել է մի քանի գրքերի հրատարակութիւն, բայց այդ գրքերը թէ ընտրութեան, թէ լեզուի և թէ նոյն իսկ արտաքին տեսքի կողմից հազիւ թէ կարող են համապատասխանել իրանց նպատակին, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ նոցա մեծ մասը երեխաների համար է նշանակուած։

Մեր ներկայ հրատարակութիւնով մենք ևս ասպարէզ ենք

դուրս գալիս ջերմ փափագով նպաստելու ժողովրդական, մանաւանդ մանկական գրքերի հրատարակութեան։ Քաղցր է մեզ նուիրել մեր գործունէութեան առաջին պտուղը հայ մանուկներին։ Որքան որ հնարաւոր էր Թիֆլիսում, որքան որ թոյլ էին տալիս մեզ մեր նիւթական և ֆիզիքական ոյժերը, մենք ոչինչ չխնայեցինք առաջին և երրորդ պայմանների, այսինքն ընտրութեան և արտաքին տեսքի համար։ Գալով լեզուին, այդ թողնում ենք ուրիշներին դատել։

Պարտաւոր ենք համարում մեզ բարոյապէս Մեր խորին շնորհակալութիւնը յայտնել այն անձանց, որոնք նիւթականապէս միջոց տուին մեզ այս գիրքը ի լոյս ընծայելու։ Մի առանձին ուրախութիւնով լցվում է մարդու սիրտը, երբ տեսնում է հասարակութեան մէջ աշխոյժ, սէր դէպի վերածնելութիւնը, երբ նկատում է, որ հայ հասարակութիւնը սկսում է ինքնաճանաչ լինել, հասկանալ կրթութեան նշանակութիւնը։ Քանի քանի մանուկներ կարող էին ապագայում հայութեան ազնիւ, բարեխիղճ անդամներ լինել, եթէ ազգային ինքնաճանաչութեան զգացումը զարթնէր մեր հասարակութեան մէջ։

Մեր նպատակը լինելով շարունակ ընթերցանութեան գրքեր հրատարակելու թէ թարգմանչական և թէ ինքնուրոյն, գէթ առայժմ երեխաների համար, այսուհետև ևս ամենայն ուրախութեամբ կընդունենք հասարակութեան կողմից որևիցէ նպաստ։ Թող ամեն մի նուիրատու համոզուի, որ նա իր լուման զոհում է մի սուրբ գործի — ազգային ինքնուրոյն զարգացման համար։ Մենք ևս բարոյական պարտք պիտի համարենք արդարացնել նուիրատու հասարակութեան ակնկալութիւնը։

Մանրամասն հաշիւ ամեն մի հրատարակութեան համար կտպուի իւրաքանչիւր գրքի վերջում։ Վաճառումից ստացած ամբողջ արդիւնքը պիտի գործածուի շարունակ միւս գրքերի հրատարակութեան վերայ։

Այս յառաջաբանը մենք տպում ենք առանձին թերթի վերայ, որովհետև մեր կարծիքով մանկական գրքերը չպէտք է ունենան որ և իցէ յառաջաբան։

Дозволено цензурою. Тифлисъ, 27 мая 1879 года.

Тип. Мартиросіанца.



I

ԹԱԻԱՄԱԶԻ ԾՆՈՒՆԴԸ

Այգու մէջ մի մեղուանոց կայ. մեղուանոցի մէջ՝ փեթակներ. փեթակների մէջ՝ խորիսխներ. խորիսխների մէջ փոքրիկ վեցանկիւնանի մոմէ տնակներ, որոնք կոչվում են բջիջներ. բջիջների մէջ լինում է կամ ոսկենման մեղր և կամ մանր սպիտակ ձուաներ։

Իսկ ձուաների մէջ ի՞նչ կայ։

Նրանց մէջն են մեղուի ձագերը, որոնցից շուտով մեղուներ պէտք է դուրս գան։ Նրանք պառ-

կած են բջիջների մէջ, ինչպէս օրօրոցում, փափուկ ու տաք և այնպէս խորն են քնած, որ ամենևին չեն շարժվում: Բայց ահա զարթեց ձագերից մէկը, շարժուեց օրօրոցի մէջ և յանկարծ ձուի կճեպը տրաքեց, կոտրուեց: Հիմա տեսնենք թէ ինչ կար նորա մէջ: Այնտեղ իսկական մեղուն չէր, այլ մի փոքրիկ սպիտակ որդ, որի մարմինը ծածկուած է օղաձև կաշուով, իսկ գլուխը՝ եղջերանիւթով: Այս օրօրոցից գլուխը հանեց թէ չէ, դայեակ մեղուն իսկոյն ծամեց մեղրի հիւթը և կաթեցրեց նորա բերանի մէջ իւր կնճիթով: Այսպէս կուլ է տալիս որդը մեղրի հիւթը ու հետզհետէ մեծանում և ամրապնդվում: Անցնում է մի շաբաթ, որդը թրթուր է դառնում: Հանում է իւր բերանից ոստայնը և շշշալով փաթաթում իւր շուրջը. մին էլ տեսնես ամենևին չէ երևում— ծածկուել է պատեանով:

—Ա՛յ դու չար փոքրիկ, վերմակի մէջ փաթաթվել ես, ով գիտէ ուզում ես, որ նանիկ ասեն: Քնիր ուրեմն հանգիստ, բայց որ ոչ ոք չխանգարէ, վերևից խուփով կծածկեմ: Յետոյ վերցրեց մեղրամոմը ու նորանով ծեփեց բջիջը: Քնած է թըրթուրը մեղրամոմի խուփի տակ ու նորա հետ քնած են միւս բջիջների թրթուրները, որոնց նոյնպէս իրանց դայեակները խուփերով ծածկել են:

Անցնում է մէկ, երկու շաբաթ. յանկարծ թխկ-թխկ մի ձայն է լսվում: Ո՞վ է թխկթխկացնում: Եւ ահա առաջին թրթուրը երկար քընելուց յետոյ՝ զարթեց և ուզում է դուրս գալ, միայն նա հիմա էլ թրթուր չէ, այլ իսկական մեղու է դարձել—ունի աչքեր, կնճիթ, թևեր և ոտքեր: Ծնոտներով կծեց իւր վերևի խուփը, դուրս հանեց այնտեղից իւր առաջին ոտքերը, յետոյ ոտքերով պինդ կանգնեց բջիջի յատակի վրայ և

այնպէս դուրս սողաց։

— Ա՜... բարև, սիրելիս, ասաց նորան դայեակ—մեղուն. լա՞ւ էիր քնած. ու՜հ ի՜նչ սիրուն մազով ես ծածկուած, ի՜նչ Թաւամազ ես։ Քո անունն այսուհետև Թ ա ւ ա մ ա զ կլինի։

Բայց փոքրիկ մեղուն շատ փոքր էր զանազանվում միւսներից, որովհետև Թաւոտ էր։ Մենք մարդիկս շատ կարելի է չկարողանայինք նորան միւսներից ջոկել, բայց մեղուները միմեանց մէկ նայելով՝ ճանաչում են։ Այսպէս այս փոքրիկ մեղուի անունը Թաւամազ դրուեցաւ։

Ինչպէս մեղուների սովորութիւնն է, դայեակ—մեղուն մաքրեց, սանրեց, այսինքն լիզեց նորան ու մազերը հարթեց. յետոյ տարաւ նորան մեղրի ամանի մօտ և ուտացրեց ոսկենման մեղրը։ Երբ որ Թաւամազը մի լաւ կշտացաւ և նորա թևերը ոյժ ստացան, դայեակ—մեղուն տարաւ նո-

րան դէպի փեթակի դուռը։ Առաջին անգամ՝ որ արեգակի ճառագայթներն ընկան նորա աչքերին, չկարողացաւ նայել, որովհետև նորա աչքերը դեռ սովոր չէին այդպիսի պայծառ լուսին, բայց հետզհետէ, երբ ընտելացան, նա ոչ թէ միայն աչքերը չէր փակում արեգակի ճառագայթները տեսնելիս, այլ ընդհակառակն ուրախանում էր։ Նա հէնց դուրս թռաւ թէ չէ, տեսաւ առաջին անգամ իւր շուրջը կանաչով ծածկած դաշտեր, իւր վերևը մաքուր, կապոյտ երկինք. ի՜նչպէս տաք էր այստեղ և ի՜նչպիսի գեղեցիկ անուշահոտութիւն էր բուրում ծառերից ու ծաղիկներից։

— Հը՞, հաւանո՞ւմ ես, լա՞ւ տեղ է։

— Հիանալի՜ է.... վա՜յ........ այս ո՞վ է։

Թաւամազը սաստիկ վախեցաւ իւր մօտովն անցնող երկուոտանուց։ Դայեակ—մեղուն ծիծաղեց։

— Ո՞ւմից վախեցար, ասաց նա, սա հօ մեր

լաւ բարեկամն է, սա մեր տէրն է՝ ծեր մեղուատէրը. սա է մեզ համար փեթակ շինել. սա է մեզ ազատում ձմեռը ցրտից ու փեթակը ներքնատուն տանում: Թէպէտ աշունքին մի փոքր նեղացնում է. փեթակը ծխով լցնում. մեզ մի անկիւնում հաւաքում ու մեղրի կէսը իրայ համար վերցնում, բայց չ՞է որ նա էլ պիտի ապրի. նա մեզ համար է աշխատում, մենք էլ նորա համար: Այն էլ պէտք է իմանաս, որ մենք իսկական թըշնամիներ էլ քիչ չունենք. կ'ապրես կ'իմանաս. դեռ դու պէտք է տանդ հետ լաւ ծանօթանաս: Գնա՛նք ցոյց տամ:

Դայեակ—մեղուն տարաւ նորան փեթակի մէջ ման ածելու:

II

Ի՞ՆՉ ՏԵՍԱՒ ԹԱՒԱՄԱԶԸ ՓԵԹԱԿԻ ՄԷՋ

Ի՞նչ ասես որ չտեսաւ Թաւամազը փեթակի մէջ. փեթակը կարծես ուղիղ քաղաք լինէր: Քաղաքը հօ գիտէք, որ շրջապատուած է պարիսպներով, փեթակը նոյնպէս շրջապատուած է փայտէ պատերով: Ինչպէս քաղաքում տեսնում էք փողոց փողոցի հետևից, տունը՝ տան մօտ, այնպէս էլ փեթակի մէջ բջիջը բջիջի մօտ, իւրաքանչիւրը վեց անկիւնանի ու մաքուր մեղրամոմից: Միայն բջիջների ներսը միևնոյն չէ, բջիջները դարսուած են տաք տեղ, նոցա մէջ փոքրիկ մանուկներ են քնած, իսկ կողքերին մեղրով լիքն ամբարներն ու շտեմարաններն են շարուած: Բայց այնպիսի մի մեծ բազմութիւն իրա-

րու է խառնվում, որ անցնել անկարելի է։ Օրօրոց-
ների վրայով ման են գալիս դայեակ—մեղուները, կե-
րակրում ու փայփայում են փոքրիկներին։ Ստորին
յարկում, որտեղ դեռ չեն աւարտուած տնակները,
աշխատում են հիւսն—մեղուները, որոնք լաւ կուշտ
ուտում են մեղրն ու փոշին, յետոյ գնում են ու
գլխիվայր կախ են ընկնում առաստաղից. այսպէս
մնում են կախընկած մի օր ու գիշեր և յետոյ
սկսում են քրտնել, բայց ոչ թէ մեզ պէս, այլ մա-
քուր, փայլուն մեղրամոմով, որը բարակ թերթե-
րի նման նստում է նորանց փորի վերայ։ Այսպէս
մեղուն քրտնում է թէ չէ, իսկոյն վազում է դէպի
խորխսխը. պոկում է փորից իր թաթով մեղրամո-
մէ թերթը. գնում է բերանը. ծամում է ու կպցը-
նում, ուր որ հարկն է։ Գալիս է նորա հետևից
միւս մեղուն և միևնոյնն է անում. գալիս է երրոր-
դը, չորրորդը, տասներորդը, հարիւրերորդը և այս-

պէս աւելանում է բջիջ բջիջի հետևից՝ մինը միւսի
նման։ Տեսնո՞ւմ էք ի՛նչ վարպետ արուեստա-
գէտներ են, որ առանց ճարտարապետի ևս հիա-
նալի տներ են շինում։

Այս միջոցում միւս հաւաքող—մեղուները գնա-
ցել են արդէն դաշտ ծաղիկներից հիւթեր հաւա-
քելու. բերում են լցնում դատարկ բջիջները քաղ-
ցրահամ մեղրով, իսկ հիւսներն իսկոյն ծեփում են
բջիջները մեղրամոմով, որ թանկագին պաշարները
չթթուեն։ Ո՛ր կողմը նայում ես, ամենքն էլ մեծ
եռանդով աշխատում են—դադար և հանգստու-
թիւն չկայ։

—Ես ամաչում եմ, ճշմարիտն ասած, որ ա-
մենքն էլ բացի ինձանից աշխատում են, ասաց
Թաւամազը դայեակին։

—Ո՛չինչ, հոգս մի՛ արա, դու էլ շուտով կ՚աշ-
խատես։ Բայց մեր մէջ կան մի քանիսը, որոնք

բոռեր--ծոյլեր են կոչվում: Նրանք անգործ ման են գալիս ու մեր պատրաստած մեղրն ուտում: Արի՛ իմ հետևից, միայն լո՛ւռ, նրանք մե՛ծ մարդիկ են, հանաքներ չեն սիրում:

Այստեղից անցան մի ուրիշ թաղ, ուր դեռ դատարկ բջիջներ կային մեղուների ձագերի համար: Չ'անցած հինգ քայլ, պատահեցան բոռերին. Նրանք ամենքը երկար թևեր ունէին և հաստ փորեր: Մէկը սրանցից բարկացած գոռաց Թուամազի ու դայեակի վերայ. «Ո՞ւր էք գնում՝ դուք. այստեղ ի՞նչ էք շինում:»

Ոչ թէ միայն Թուամազը, այլ և դայեակ—մեղուն անգամ մի լաւ վախեցան:

—Ոչինչ.... մենք այնպէս.......չի՞ կարելի, պարոն, որ գոնէ հեռուից մի նայենք մայր Թագուհու վերայ:

—Անկարելի է, խստութեամբ գոռաց բոռը:

—Ողորմած տէ՛ր, խնդրում ենք, գոնէ.....

—Ասացի արդէն, որ չի կարելի: Մայր Թագուհին այժմ գործով է զբաղուած: Հանա՞ք բան է օրական երկու հազար ձու ածելը: Էլ ի՞նչ էք կանգնած: Հեռացէ՛ք իսկոյն այստեղից: Դայեակը մի ախ քաշեց ու Թուամազի թևից բռնեց:

—Ի՞նչ պէտք է անենք, գնա՛նք, ասաց նա:

Սրանց բաղդից հէնց այն էր՝ մայր Թագուհին վերջացրել էր իւր ծանր գործը. երկու հազար ձու էր ածել արդէն ու տասն էլ աւելի, յանկարծ մօտակայ փողոցից մի հիանալի զանգակի նման ձայն լսուեց: Բոռերն իսկոյն շուռ եկան. կարգով կանգնեցան ու միաձայն կանչեցին. «Կեցցէ Թագուհին. ..», մի րոպէ չ'քաշեց և ահա այն փողոցից դուրս եկաւ ինքը մայր Թագուհին:

Թուամազը հիացաւ: Թագուհին միւս մեղուներից երկու անգամ աւելի մեծ հասակ ունէր և մի-

ևնոյն ժամանակ աննման գեղեցիկ։ Նա քաղցրութեամբ ողջունեց դայեակին ու Թաւամազին և գնաց իւր ննջարանը հանգստանալու։

—Ա՜խ, ի՜նչ ազնիւ ու բարի կերպարանք ունի, ասաց դայեակը հիացած, առաւօտից սկսած մինչև իրիկուն մարդ որ դորան մտիկ տայ, է՛լի չի կշտանայ։

—Ա՜խ, այո՛, ասաց Թաւամազը, որ հազիւ հիմա էր ուշքի եկել. ի՞նչ գործ պէտք է կատարեմ։

—Գործ կգտնուի, ասաց դայեակը. դաշտ գնալը դեռ վաղ է քեզ համար, իսկ խորխոխ շինել կամ մանուկներին կերակրել, դու կարող ես. ընտրի՛ր որը կամենում ես։

—Ի հարկէ վերջինը լաւ է. մանուկներին կերակրել, թէ տիկին խաղալ՝ միևնոյն է։

Յետոյ նրանք գնացին մանկանոցը ու Թաւամազը քիչ ժամանակում իր դայեակից էլ լաւ դայեակ դարձաւ։

III

ԹԱՒԱՄԱԶԸ ՀԱՒԱՔՈՂ Է ԴԱՌՆՈՒՄ

Անցաւ արդէն մի քանի օր, բայց Թաւամազն այնպէս եռանդով խնամք էր տանում փոքրիկ ձագերին, որ ոչ մի անգամ դուրս չգնաց զբօսնելու։

—Այդպէս դու բոլորովին կյոգնես, ասաց նորան իւր դայեակը. դուրս գնա դաշտը մի փոքր զբօսնելու ու թևերդ էլ փորձի՛ր։

—Դեռ որ թռչել չեմ իմանում։

—Կսովորես։

—Որ վայր ընկնեմ։

—Չես վայր ընկնի, մի՛ վախենար։

Թաւամազը դուրս եկաւ դէպի փեթակի դուռը և շարժեց թեւերը. յանկարծ իրան տեսնում է օդի մէջ. վա՜յ.... կվայր ընկնեմ.... բայց չէ.... թեւերը բռնում են, ի՜նչպէս սարսափում եմ գետին նայելիս։

Այդ միջոցում անցնում էր նորա մօտով մի պառաւ հաւաքող—մեղու. Նա ձայն տուեց Թաւամազին.

—Այստեղ ի՞նչ ես անգործ թռչում։

—Զբօսնում եմ, պատասխանեց Թաւամազը։

—Զբօսնո՞ւմ ես. Աստուած սիրես, միւս քոյրերդ վիզը ծռած աշխատում են, իսկ դու առողջ, մանաւանդ այդպէս մազոտ, որին ամեն ծաղկի փոշի առանց դժուարութեան կկպչի, անգործ ման ես գալիս։ Կարծես ճակատիդ գրած է, որ դու հաւաքող պէտք է լինես. ես կսովորեցնեմ քեզ. թռի՛ր ուրեմն իմ հետեւից. շո՛ւտ։

1002
6869

Թէպէտ պառաւ մեղուն մի փոքր նախատեց մեղուիկին, բայց միևնոյն ժամանակ գովեց նորա թաւոտ մազը, մինչև անգամ խոստացաւ սովորեցնել, կնշանակէ հաւանեց նորան։ Թաւամազի ուրախութիւնն անչափ էր. յանկարծ մի աստիճան բարձրացաւ, հաւաքող դարձաւ։ Պառաւ մեղուն այնպէս արագ էր թռչում, որ մեր Թաւամազը հազիւ էր կարողանում հետեւիցը հասնել. ահա նրանք թռան մի դաշտ, որտեղ ծաղկել էին ամեն տեսակ ծաղիկներ—կարմիր, կապոյտ, դեղին, սպիտակ...... ինչ գոյն կուզես։

—Կանգնի՛ր, հասանք, ասաց պառաւ—մեղուն, յետոյ մտաւ ծաղկի ներսը։ Թաւամազը հետեւեց։—Ահա՛ տեսնո՞ւմ ես, այստեղ յատակում մեղր կայ, ասաց պառաւ մեղուն. լիզի՛ր այդ, միայն զգո՛յշ, չկուլտաս, քարշիկիդ մէջ հաւաքի՛ր. յետոյ ինքը լիզեց մեղրի հիւթը և առաջին ոտներով քար-

ճիկի մէջ գցեց։ Թուամազը միևնոյնն արեց։

— Շատ լաւ, ապրես, գովեց նորան պառաւ—մեղուն, բայց փոշին էլ հարկաւոր է վերցնել։ Քըսենք վրաներս, որ աւելի լաւ կպչի։ Յետոյ վերցրեց պառաւ մեղուն մնացած մեղրը ու քսեց իրա ու Թուամազի առաջին ոտքերի վերայ։

— Դու Թաւոտ ես, մեղրը քեզ շատ լաւ կկպչի. այժմ արի իմ հետևից և արա այն, ինչ որ ես կ՚անեմ։

Նա գնաց ծաղկի դեղին փոշէ ամանների մօտ ու նրանց միջով անցնելով՝ ճարպիկութեամբ հանում էր առաջին ոտքերով փոշին և քսում հետևի մեղր քսած ոտքերին։ Թուամազը միևնոյնն էր անում։ Յանկարծ սա նայեց պառաւ—մեղուին, յետոյ իրան ու չկարողացաւ ծիծաղը բռնել։ Նորա երկուսն էլ կարծես դեղին վարտիքներ էին հագել։

— Հա՛, ի՞նչ է, գեղեցիկ չէ՞ վարտիքդ, ասաց

պառաւ—մեղուն. կարո՞ղ ես տուն հասնել այդպէս ծանր վարտիքով։

— Կարող եմ, ասաց Թուամազն ու Թռաւ դէպի փեթակը։

Մտաւ փեթակի մէջ թէ չէ, իսկոյն յարձակվեցան նորա վերայ դայեակներն ու հիւմները և սկսեցին ուտել նորա զարդարուն վարտիքը։

— Վա՜յ, պահապաններ, օգնեցէք, վարտիքս բոլորովին կերան։

— Ոչինչ, թո՛ղ տուր ուտեն, քաղցած են, ասաց պառաւ մեղուն։ Բաւական է, լա՛ւ, ագահներ, հեռացէք վերջապէս սորանից։

— Գնանք այժմ մեղրը հանելու։

Նրանք գնացին մի մօտիկ շտեմարան ու ածեցին բոլոր հաւաքած մեղրը դատարկ մոմեղէն ամանների մէջ։

Այսպէս Թուամազը հաւաքող դարձաւ։ Դր-

ժուար էր արդարեւ նորա գործը, բայց որքան քաղցր էր օրուայ աշխատանքից յետոյ հանգստանալը։ Երեկոյեանները, երբ վերջացնում էր գործը, դուրս էր գնում իւր ընկերուհիների հետ զբօսնելու։ Տուն էր գալիս նա, թրպրտում ու բզզալով պատմում իւր ընկերուհիներին ամբողջ օրուայ տեսածն ու լսածը։

IV

ՊԱՌԱՒ ՄԵՂՈՒՆ ՆՈՐ ԲՋԻՋ Է ՇԻՆՈՒՄ

Ամէն օր մայր թագուհին ածում էր հազար-երկու հազար ձու և իւրաքանչիւր ձուից մէկը միւսի հետեւից դուրս էին գալիս փոքրիկ ձագեր, այնպէս որ տեղը

նեղութիւն է անում — մի փեթակն էլ բաւական չէ նրանց, պէտք է երկու ընտանիքի բաժանուին։

Ահա փեթակի մի անկիւնից մի ձայն է լսւում, «կուա, կուա, կուա». միւս անկիւնից մի ուրիշը բարկացած պատասխանում է, «տիւ, տիւ, տիւ»։ Մեղուները լսեցին թէ չէ այս ձայները, մի կողմ թողին իրանց գործերը, խառնուեցան, իրար դիպան ամէնքը և փեթակի մէջ ահագին խառնակութիւն ձգեցին։ Այս խառնակութեան մէջ զարձեալ լսւում էր մի անկիւնից կռկռալը, միւսից բզզալն ու տվտվալը։

— Ի՞նչ նշանակութիւն ունեն այս ձայները։

— Այ ի՛նչ, կռկռացողը նոր ծնած մայրն էր, որն ուզում էր դուրս գալ օրօրոցից, բայց չէր համարձակւում, իսկ տվտվացողը հին մայրն էր. նա բարկանում էր, որ նոր ծնած մայրը իւր տեղը պէտք է բռնէր, պատճառ որ չի կարելի մէկ փեթակի

մէջ երկու մայր լինի, պէտք է մէկն ու մէկը հեռանայ։

—Թողէ՛ք ինձ, թողէ՛ք, ասում էր հին մայրը չարացած, ես նորան ցոյց կտամ։ Բայց բոռերն ու աշխատող մեղուները արգելում էին — 'ի սէր Աստուծոյ, մի՛ ձեռ տաք, խղճացէ՛ք նորան. ձեզանից մէկը պէտք է խոնարհուի, և յայտնի է, որ խելօքները ներողամիտ են լինում։

—Այդ էլ ճշմարիտ է, ասաց հին մայրը. ուրեմն ով իմ կողմն է, թող հետևէ ինձ։ Այս խօսքերն ասաց ու կայծակի նման դուրս սողաց փեթակից։ Բայց նորա թևերը, ինչպէս ամեն մայր-մեղուներինը, կարճ էին, այդ պատճառով դժուարութեամբ էր թռչում։ Թռաւ մի քանի քայլ, յոգնեց ու նստեց մօտակայ ծառի ճիւղի վերայ։ Հին մեղուներն այս բանը տեսան թէ չէ, եկան, հաւաքուեցան ու միևնոյն ճիւղի վերայ նստեցան՝ մէկը

միւսի վերայ, այնպէս որ քիչ էր մնում ճիւղը կոտրուէր։ Բայց ո՛չ. չթողին որ նա կոտրուէր։ Ո՞վ էր արգելողը։ Ծեր մեղուանոցի տէրը, որից Թաւամազը առաջին անգամ այնպէս խիստ վախեցաւ։ Նա նստած էր իւր խրճթի առաջ, երբ տեսաւ մեղուների պարը, իսկոյն ձեռներն ու երեսը ծածկեց պղնձէ ցանցով, վերցրեց մի փայտէ գդալ ու մի փեթակ և գնաց այնտեղ, որտեղ հաւաքուած էին մեղուները։ Փեթակը դրեց ուղիղ ճիւղի տակը, ցած քաշեց ճիւղը ու սկսեց գդալով քշել մեղուներին փեթակի մէջ։ Սկզբում մեղուները չէին ուզում մտնել փեթակը, որովհետև դեռ մայր—մեղուն չէր մտել, բայց ծերը շուտով ճանաչեց նորան միւս մանր մեղուների մէջ։

—Ա՜, ողջոյն քեզ, տի՛կին էտ որտեղ ես եղել, ասաց ծերը և զգուշութեամբ նորան էլ գցեց փեթակի մէջ։

Ուրախութեամբ մտաւ մայր մեղուն նոր փեթակի մէջ, որովհետև այնտեղ ճիւղի վրայ այնպէս էին շրջապատել մեղուները, որ հազիւ էր կարողանում շունչ քաշել։ Երբ մեղուները տեսան, որ մայր թագուհին արդէն փեթակի մէջն է, ուրախ ուրախ ամենքն էլ մտան նորա հետևից։ Այն ժամանակ մեղուանոցի տէրը տարաւ փեթակը մի աւելի յարմար տեղ, ուր աւելի արձակ էր և արեգունի, յետոյ երեսը խաչակնքեց և ասաց. «Աստուած միշտ օգնական է։»

Իսկ Թուամազը ի՞նչ եղաւ։

Յայտնի բան է, որ նա էլ միւսների նման նոր փեթակը մտաւ ու նորա առաջին հոգսը եղաւ նոր տան շուրջը պտըտիլը։ Ո՜հ, ի՜նչպէս դատարկ էր փեթակը. ոչ փողոց կար, ո՛չ մառան, մինչև անգամ մէկ մեղրամոմն էլ չկար։

Ուրեմն ի՞նչ պէտք է անել։

Ի հարկէ, պէտք է այնքան աշխատել, որ շուտով նոր տունն էլ հին տան նման սիրուն սենեակներ և մեղրամոմներ ունենայ։

Եւ յիրաւի, կարծես հրաշքի նման շուտով փեթակը լցուեցաւ խորիսխներով, խորիսխները քաղցրահամ մեղրով։

Ինչո՞ւմն էր հրաշքը։

Նրանում, որ ամենքը միատեսակ ջանքով աշխատում էին, իւրաքանչիւրը նրանցից մտաբերելով իրանց օրէնքը՝ թէ մէկը պէտք է աշխատէ, գործէ ամենքի համար, ամենքը՝ մէկի համար։

V

ԹՈՒԱՄԱԶԻ ՄԱՀԸ

Քաղցր ու սիրով ապրում են մեղուները իրար

հետ. երբէք չեն կռւում, չեն խռովում միմեան-
ցից, միայն այն է դժբախտութիւնը, որ թշնամիներ
շատ ունեն — մէկին ծիծեռնակը կամ ճնճղուկն է
թռչելու ժամանակ բռնում, կուլ տալիս, իսկ միւսին
սարդը իւր ոստայնի մէջ խճճում: Թէպէտ իրանք
մեղուներն էլ ունեն խայթոց, որով կարող են թշնա-
միների հետ կռւել, բայց ցաւալին այն է, որ խայ-
թոցը կոտրվեց թէ չէ, ինքը մեղուն էլ հետն է
գնում—նա առանց խայթոցի մի օր էլ չի կարող
ապրել: Բայց եթէ թշնամին փեթակի վերայ յար-
ձակուի, նրանք իրանց կեանքն էլ չեն խնայի հայ-
րենի տունը ազատելու համար. նրանք ամենեւին
չեն մոռանում իրանց օրէնքը, թէ ամենքը մէկի
համար են, մէկն ամենքի: Այսպիսի թշնամիներ
մեղուները շատ ունեն. շատ անգամ հարեւան փե-
թակի մեղուն ծածուկ ներս կմտնի, երբեմն խորամանկ
մրջիւնը, բայց սրանց առանց խայթոցի էլ կարող



Gez. Koltschin, Graw. A. Schwan — Lit. W. Erfurt, Arend A. Schwan

ամենքը մէկի համար, մէկն ամենքի.

են դուրս ձգել, այնպէս կկծեն ծնոտներով, որ էլ ամենևին չհամարձակուեն այնտեղ ոտք կոխել։ Բայց երկու ամենաչար թշնամիներ ունեն—մէկը փոքրիկ ծվծվան մուկը, իսկ միւսը մրթմրթան ահագին արջը։ Մուկը ձմեռն է պատահում, երբ փեթակը ներքնատանն է լինում, իսկ արջը թէպէտ ուշ ուշ է պատահում, բայց ամեն անգամ բաւական մեծ վնասներ է տալիս։

Մի անգամ, երբ Թուամազը դաշտից տուն էր դառնում, նորա ականջին հասաւ փեթակի կողմից մի անսովոր ձայն. լսվում էին բզզոցի ձայներ ու մի սարսափելի գազանի գռռոց։ Մօտ եկաւ Թուամազը ու զարմացաւ, երբ տեսաւ որ մեղուները խումբերով դուրս են եկել փեթակից ու նորա շուրջը բզզալով պտտում էին։ Այնպէս էին իրար դիպել ու կատաղել, որ ոչինչ չէր կարելի հասկանալ, միայն այս խօսքերն էին լսվում. «Թշնամի ար-

ջը..... թշնամի արջը...:» Եւ յիրաւի, արջը յետին ոտքերի վերայ կանգնած, ու մրթմրթալով ման էր գալիս փեթակների միջով, իսկ առաջին ոտքերով պաշտպանվում էր մեղուներից: Յանկարծ նա շուռ եկաւ, դիպաւ մօտիկ դրուած փեթակին. սա մեր Թուամազի փեթակն էր, որին գետին գլորեց: Վայր ընկաւ փեթակի խուփը ու դուրս թափուեցան այնտեղից մնացած մեղուները. ինքը արջը մի թաթով պաշտպանում էր իրան, միւս թաթը տուն էր տանում փեթակի մէջ, ուր որ մեղրի շտեմարանն էր ու ագահաբար կուլ էր տալիս ոսկէնման ու քաղցր մեղրը: Այս ամէնը որ տեսաւ Թուամազը, չկարողացաւ համբերել և «Ամէնքը մէկի համար, մէկն ամէնքի համար» օրէնքը կրկնելով՝ յարձակուեցաւ արջի վերայ և ուղիղ աչքը խայթեց: Արջը մռնչաց սաստիկ ցաւից ու փախաւ այն տեղից: Այն ժամանակ ե-

կաւ մեղուանոցի տէրը և վայր ընկած փեթակն ուղղեց: Բայց խեղճ Թուամազ..... Նա այնպէս խորը խայթեց, որ խայթոցը մնաց աչքի մէջ: Խեղճը յանկարծ թուլացաւ, ընկաւ գետնի վերայ ու փակեց աչքերը յաւիտեան:

Բայց մեռնելիս չէր զղջում նա, որ փեթակի ազատելու համար իւր կեանքը զոհեց:

Ո՛չ, ամենևին ոչ: Նորա վերջին խօսքերն էին. «Ամէնքը մէկի համար, մէկն՝ ամէնքի:»

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI—1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«ԹԱԽԱՄԱՋ ՄԵՂՈՒ»

Գրքոյկի հրատարակութեան հաշիւը։

	Ր.	Կ.
Պ. Շուանին պատկերների համար	150	„
Նկ. Կօլչինին մի պատկեր նկարելու	15	„
Թուղթ երեսների համար	8	10
Թուղթ միջի նկարների համար	9	45
Բարակ թուղթ նկարների համար	3	50
Թուղթ 5 օղմ. 11 դ.	82	88
Մշակին մինչև տպարան	„	20
Կազմը 1250 հատի համար	87	50
Թուղթ յառաջաբանի համար	1	80
Սպիտակ կալենկոր կազմերի համար	6	„
Պ. Մարտիրոսեանցին տպելու	28	„
	392	43

Նուիրատուների անունները կտպուեն «Կարմիր լապտեր» գրքոյկի մէջ, որը այս օրերս լոյս կտեսնի։

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

897

00005051

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0005051

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.